ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 31 մայիսի 2019թ.

Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Կարապետ Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու մասին.

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում դատապարտյալի կոշիկի և անկողնային ծածկոցի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման ձևով, կազմակերպված **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/19»** ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը, հաշվի առնելով, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են օրենսդրությամբ և հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին, ինչպես նաև, հիմք ընդունելով հրավերի Հավելված 9-ով նախատեսված տեղեկատվությունը ուղարկված ՀՀ ՊԵԿ-ի կողմից որոշեց՝

1.1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/19»** ծածկագրով գնման ընթացակարգի՝

N 1 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող մասնակից ճանաչել **«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին**,

N 2 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող մասնակից ճանաչել **«Կոտայքկոշ» ԲԲԸ-ին**, որոնց առաջարկած գները նվազագույնն են և չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

1.2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

1.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա.Խաչատրյան

Քարտուղար՝ ---------- Ն. Աբովյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Հովհաննիսյան

2. ---------- Կ.Քարտաշյան